Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
նոյեմբերի 8-ի N 1256 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԱՌԱՔՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն պահանջներով կարգավորվում են դեղատնից դեղերի առաքմանը ներկայացվող տեխնիկական և մասնագիտական պահանջների հետ կապված հարաբերությունները:

2. Դեղերի առաքում կարող են իրականացնել դեղատնային գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը:

3. Դեղագետը կամ դեղագործը պատվերը գրանցելուց հետո պատվիրատուին է տրամադրում անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում՝ դեղատանն առկա՝ նույն բաղադրատարրը պարունակող, նույն դեղաչափով և դեղաձևով փոխադարձաբար փոխարինելի բոլոր դեղերի և դրանց գների վերաբերյալ, առանց ուղղորդման:

4. Թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող, անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող, հակավարակային (հակաբակտերիային դեղեր, հակասնկային դեղեր, հակամիկոբակտերիային դեղեր, հակավիրուսային դեղեր, իմունային շիճուկներ և իմունոգլոբուլիններ, պատվաստանյութեր) դեղեր չեն առաքվում:

5. Դեղերը պատվիրատուին առաքվում են ամբողջականությունը չխախտված սպառողական փաթեթներով՝ ապահովելով դեղի գրանցման ժամանակ հաստատված պահման ու տեղափոխման պայմանները և հատուկ ուշադրություն դարձնելով ջերմաստիճանային ռեժիմի տատանումների նկատմամբ խիստ զգայուն դեղերին:

6. Առաքումն իրականացնելու նպատակով դեղատունը պետք է ունենա առանձին տեղափոխման տարա (պայուսակ), որն ապահովում է անհրաժեշտ ջերմային ռեժիմի ժամանակավոր կայունություն: Ջերմաստիճանային ռեժիմի տատանումների նկատմամբ խիստ զգայուն դեղերն առաքելիս՝ պետք է ապահովել ջերմամեկուսիչ փաթեթավորում:

7. Առաքման ծառայության, ինչպես նաև դեղի արժեքի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ պատվիրատուի և դեղատան փոխպայմանավորվածության համաձայն դուրս գրված ուղեկցող փաստաթղթերով (հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոն, հարկային հաշիվ կամ հաշիվ-վավերագիր):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ